ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱՁԵՎ ՈՒԵԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

2002 թ. հոկտեմբերի 30-ին Ուելսի Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ ընդունեց «Տեսակետի հայտարարություն», որով կոչ է արվում Թուրքիային՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Ուելսի Ազգային ժողովն այսպիսով Միացյալ Թագավորության մեջ դարձավ առաջին օրենսդիր մարմինը, որն արտահայտեց իր վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հանդեպ:

Դոկտոր Ռիչարդ Էդվարդսը (Աշխատավորական կուսակցություն), պրն Սինոգ Դեյվիսը (Փլադ Սիմրու) և տիկին Կիրթսի Ուիլիամսը (Լիբերալ դեմոկրատական կուսակցություն) ժողովի այն երեք անդամներն են, ովքեր բարձրացրին այս հարցը, տարան կազմակերպչական ու տեղեկատվական մեծ աշխատանք՝ լուսաբանելով 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում կատարված հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման անհերքելի փաստերը:

Նույն օրը Քարդիֆում, Ուելսի Ազգային ժողովում, տեղի ունեցավ պառլամենտականների ու հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպում: Այս միջոցառմանը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ, մասնակցեց նաև Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Սրբազան Հայրն Ուելսի Ազգային ժողովին փոխանցեց Վեհափառ Հայրապետի երախտագիտության խոսքը:

ԸՍՏ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ